«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԼԻԱՆՍ ՖՐԱՆՍԵԶ»

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՏՀՏ-Ն՝ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԴՊՐՈՑ՝ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ՍՅՈՒԶԱՆ ՂԱՐԱՄՅԱՆ

ԶԵՄՖԻՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....1

Ներածություն.....2

Մաս1 ՏՀՏ-ի կիրառումը ֆրանսերենի դասավանդման ընթացքում

1.1 ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունը ֆրանսերենի դասավանդման գործընթացում.....3

Մաս2 eTwinning հարթակը որպես աշակերտների լեզվական, միջմշակութային, սոցիալական հմտությունների զարգացման միջոց…….....6

2.1 Դասավանդման իմ փորձից.....8

2.2 Թվային գործիքներ, որոնք կիրառվեցին նախագիծն իրականցնելիս……11

Եզրակացություն.....13

Հավելված.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

Ներածություն

Օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակն է զարգացնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները, նպաստել միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանը, գնահատմանը, բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն:

Դասավանդումը միտված է նրան, որ աշակերտը կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում և առօրյա կյանքում: Օտար լեզուներով հաղորդակցվելու համար անհրաժեշտ է հասկանալ, արտահայտել և մեկնաբանել հասկացությունները, մտքերը, զգացմունքները, փաստերը և կարծիքներ արտահայտել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում: Արդյո՞ք դասի ընթացքում մենք կարող ենք ապահովել յուրաքանչյուր աշակերտի կարիքները, որպեսզի վերջիններս կարողանան ինչ-որ չափով հաղորդակցվել օտար լեզվով: Խոսքը պարզապես սովորած կառույցների և բառապաշարի կրկնության մասին չէ, աշակերտը պետք է կարողանա կիրառել այդ բառապաշարը և կառույցները նաև դասարանից դուրս: Հենց այստեղ է, որ թվային տեխնոլոգիաները հեղափոխություն են մտցնում գիտելիքի փոխանցման և յուրացման հարցում:

Այս աշխատանքի նպատակն է բացահայտել թվային գործիքների ինտեգրման դրական ազդեցությունը ֆրանսերենի դասավանդման ընթացքում: Ստորև կներկայացվի նաև իմ փորձը, թե ինչպես են թվային տեխնոլոգիաները նպաստում ֆրանսերենի դասավանդման արդյունավետության բարձրացնմանը և ինտերակտիվ ուսուցմանը: Կծանոթանանաք նաև eTwinning հարթակին, կփորձենք ներկայացնել նրա դրական ազդեցությունը ֆրանսերենի դասավանդման գործընթացում: Կներկայացվեն նաև այլ թվային գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է դառնում բարձրացնել սովորողների մոտիվացիան ֆրանսերեն սովորելիս:

ՏՀՏ գործիքների կիրառման դերն ու նշանակությունը ֆրանսերենի դասավանդման գործընթացում

Այսօր կյանքն անհնար է պատկերացնել առանց թվային տեխնոլոգիաների: Հետևաբար շատ կարևոր է, որ սովորողները կարողանան դիմակայել 21-րդ դարի մարտահրավերներին, որոնցից կարևորագույնը ժամանակակից տեխնոլոգիաներին և թվային գործիքներին տիրապետելն է: Տեխնոլոգիաների կիրառումը կրթության մեջ մեծ փոփոխություն է մտցրել: Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ ժամանակակից տեխնոլոգիաների՝ որպես դասավանդման արդյունավետության բարձրացման միջոցի օգտագործման բազմաթիվ եղանակներ և մոտեցումներ կան: Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%-ը և տեսածի 20 %-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40%-50%: Սկսենք նրանից, որ առցանց աշխատանքային գործիքները հնարավորություն են տալիս ներգրավել բոլոր սովորողներին, նույնիսկ նրանց, ովքեր դժվարությամբ են ներգրավվում դասապրոցեսի մեջ կամ ցուցաբերում են ցածր առաջադիմություն: Առցանց գործիքները հնարավորություն են տալիս նաև խթանել տարբերակված ուսուցումը: Բացի այդ, տեխնոլոգիական գործիքներն իրենց խաղային և ինտերակտիվ առավելությունների շնորհիվ նպաստում են ուշադրության կենտրոնացմանը, ինչը հանգեցնում է շատ ավելի մեծ մասնակցության, քան ավանդական մեթոդներով դասի վարումը:

Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էլեկտրոնային հուշաքարտերի միջոցով բառապաշար սովորելն ավելի արդյունավետ է, քան գրառումները վերընթերցելը: Քերականության դասավանդումը, կանոնների կիրառումը ավելի մատչելի և հասանելի են դառնում աշակերտներին՝ թվային ռեսուրսներ կիրառելիս: Ավելացնենք նաև, որ տեխնոլոգիաների և համացանցի հասանելիության շնորհիվ ռեսուրսները դառնում են անսահմանափակ: Բոլոր թվային գրքերը և ուսուցողական ռեսուրսները հասանելի են դառնում և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտներին: Սովորողն այլևս չի սահմանափակվում տվյալ

առարկայի մեկ դասագրքով, այլ անհրաժեշտության դեպքում կարող է աշխատել դասագրքերի և վարժությունների անսահման բազմազանության հետ:

Արդեն նշվեց, որ դասավանդման ժամանակակից տեխնոլոգիական գործիքները նպաստում են անհատականացված ուսուցմանը, այսինքն ուսուցումը կարող է հարմարեցվել յուրաքանչյուր սովորողի հնարավորություններին և ընդունակություններին: Վերջինս յուրաքանչյուր վարժությունը բազմիցս կրկնելու, սխալ հասկացված հասկացությանը վերադառնալու բազմակի հնարավորություններ ունի:

Ի վերջո, թվային գործիքները թույլ են տալիս ուսուցչին ավելի պարզ և արագ ձևով կազմել վարժություններ կամ անհատական առաջադրանքներ, հարմարեցնել ուսուցման տեմպին, յուրաքանչյուր դասարանին կամ աշակերտների խմբին: Մյուս կողմից պետք է նշել նաև, որ դասավանդման մեթոդների արագ զարգացումը և փոփոխությունը քննարկումների առարկա են դառնում: Արդեն խոսվեց այն մասին, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ նաև բացասական կարծիքներ են հնչում: Սակայն, ես, իմ փորձից ելնելով, ուզում եմ ընդգծել, որ յուրաքանչյուր աշակերտ յուրովի է սովորում, և, եթե, ավանդական դասավանդման ընթացքում աշակերտները պետք է հարմարվեին դասի տեմպերին կամ հետ մնային, այսօր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս, որ սովորողներն ավելի շատ ազատություն ունենան: ՏՀՏ-ի կիրառումը շատ կարևոր է նաև ուսուցիչների համար, քանի որ տեխնոլոգիաները օգնում են դասի կառուցվածքը համապատասխանեցնել յուրաքանչյուր երեխայի անհատական ուսումնական պահանջներին: Ավանդական ուսուցման մեթոդները թույլ էին տալիս ուսուցչին տեղեկատվություն փոխանցելու իրենց սովորողներին, մինչդեռ տեխնոլոգիաների կիրառումը ճկունություն է ապահովում և աշակերտներին տալիս է հնարավորություն՝ ոգևորվելու և ակտիվորեն ներգրավվելու:

Այս առումով թվային հեղափոխությունը դրական ազդեցություն է ունեցել բոլոր ոլորտների վրա, հատկապես կրթության՝ թույլ տալով սովորողներին բարելավելու իրենց հաղորդակցման և լեզվական հմտությունները: Տեխնոլոգիան փոխել է մեր ապրելակերպն ու վարվելակերպն աշխարհում: Այսօր ինտերակտիվ

գրատախտակները, առցանց ռեսուրսները, կրթական կայքերը հասնում են օգնության, թեթևացնում ուսուցչի աշխատանքը, բարձրացնում աշակերտների մոտիվացիան, սովորելու ցանկությունը, մրցակցային ոգին: Հետևաբար ուսուցիչները ջանքեր են գործադրելու, որպեսզի մեթոդաբանությունը, ռեսուրսները, գործիքները, գնահատումը հարմարեցնեն նոր ժամանակաշրջանին:

eTwinning հարթակը որպես աշակերտների լեզվական, միջմշակութային, սոցիալական հմտությունների զարգացման միջոց

Մենք բոլորս սովորում ենք տարբեր կերպ. մեզանից ոմանք նախընտրում են հանգիստ ուսումնառություն, մյուսները սիրում են ինտերակտիվ առաջադրանքներ: Ինտերակտիվ ուսուցումը մանկավարժական մոտեցում է, որն օգնում է սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և գործնական հմտություններ՝ կենտրոնանալով հասակակիցների և ուսուցիչների փոխազդեցության վրա: Ինտերակտիվ ուսուցումը որպես ժամանակակից մանկավարժական մոտեցում, առաջարկում է բազմազան և գրավիչ ուսուցում, որը չի սահմանափակվում միայն տեսական հասկացություններով, այլ ավելի շատ շեշտադրում է իրական կյանքում կիրառելիությունը, ինչը շատ կարևոր է օտար լեզուների ուսուցման ընթացքում:

Նախկինում ուսուցումը ինտենսիվորեն կենտրոնացած էր փաստերն ու թվերը մտապահելու վրա: Սրան հակառակ, ժամանակակից մանկավարժական ռազմավարությունները, հենվելով անհրաժեշտ կարողունակությունների զարգացման վրա, առաջարկում են ավելի արդյունավետ մոտեցումներ: Օտար լեզուների դասավանդման և ուսուցման ընթացքում կարելի է կիրառել բազմաթիվ էլեկտրոնային ռեսուրսներ, թվային գործիքներ:

Այս մասում կուզենամ խոսել eTwinning-ի մասին: eTwinning-ը էլեկտրոնային համագործակցության ինտերակտիվ հարթակ է: Հարթակի կիրառման պաշտոնական մեկնարկը է տրվել է 2005 թվականի հունվարի 14-ին Բրյուսելում՝ որպես Եվրոպական հանձնաժողովի էլեկտրոնային ուսուցման ծրագիր և համաֆինանսավորվում է Էրազմուս+-ի կողմից: eTwinning բառի մեջ «e»-ն նշանակում է «էլեկտրոնային», իսկ «twinning»՝ «փոխադարձ գործընկերություն», որն առաջարկում է համագործակցության հարթակ տարբեր դպրոցների ուսուցիչների և աշակերտների համար՝ օտար լեզվով հաղորդակցվելու, սովորած բառապաշարը և քերականական կանոնները գործնականում կիրառելու, ինչպես նաև թվային գրագիտությունը զարգացնելու համար: Մյուս տեսանկյունից eTwinning-ը զարգացնում է սովորողների միջմշակութային հաղորդակցության հմտությունները, որը շատ կարևոր նախապայման է օտար լեզուների դասավանդման ընթացքում:

Այսպիսով, eTwinning-ը համագործակցային հարթակ է, որը հնարավորություն է տալիս Եվրոպական միության կամ անդամ երկրների 2 կամ ավելի դպրոցներին համատեղ մշակել և իրականացնել ուսումնական նախագծեր ուսումնական որևէ թեմայի վերաբերյալ: Դպրոցները գրանցվում են հարթակում և օգտագործում են eTwinning առցանց գործիքները միմյանց հետ հանդիպելու, գաղափարներ փոխանակելու, միասին սովորելու և իրականացնելու ուսումնական առցանց նախագծեր:

eTwinning-ը հարթակ է, որտեղ նախագծային ուսուցում իրականացնելը դառնում է ավելի համակարգված, ապահովում է միջառարկայական կապը, կենտրոնանում է ուսուցման գործընթացի վրա և նպաստում աշակերտակենտրոն դասավանդման գործընթացի կազմակերպմանը: eTwinning-ում իրականացրած նախագծերը զարգացնում են և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների թվային կարողունակությունները, սովորել սովորելու կարողունակությունները, սոցիալական և քաղաքացիական պատասխանատվությունը, մշակութային իրազեկվածությունը և ստեղծարարությունը:

eTwinning-ի նախագծերը տալիս են ներքոգրյալ բոլոր հնարավորությունները.

ա) անվտանգ առցանց հարթակ (Twinspace)՝ ստեղծելու և իրականացնելու համար ուսումնական նախագծեր եվրոպական գործընկերների հետ,

բ) մասնագիտական զարգացման հնարավորություն,

գ) ֆրանսախոս միջավայր, ֆրանսախոս գործընկերներ և աշակերտներ,

դ) մասնագիտական զարգացման առցանց սեմինարներ, ուսումնական վեբինարներ,

դ) ազգային և եվրոպական որակի պիտակներ և մրցանակներ:

eTwinning-ի շնորհիվ ուսուցիչների և սովորողների միջև շփումը դառնում է ավելի անմիջական, ստեղծվում է ուսուցման համար հարմար միջավայր, աշակերտները ոգևորված աշխատում են թիմերում և համագործակցում են եվրոպական տարբեր դպրոցների նույն տարիքի աշակերտների հետ:

2.1 Դասավանդման իմ փորձից

Քանի որ օտար լեզուների դասավանդումը միտված է խոսքային գործունեության բոլոր տեսակների զարգացմանը, ապա դա հեշտությամբ կարող է իրականացվել eTwinning հարթակի նախագծերի միջոցով: eTwinning-ի նախագծերի պրակտիկայի ներդրումը ֆրանսերենի ուսուցման գործընթացում հազվադեպ ուսումնասիրված ոլորտ է, այդ պատճառով էլ որոշեցի ներկայացնել eTwinning-ի նախագծերի պրակտիկայի ներդրումը օտար լեզուների, մասնավորապես ֆրանսերենի դասավանդման մեջ: Այս նախագծերը բարձրացնում են սովորողների մոտիվացիան՝ ինչու՞ սովորել ֆրանսերեն: Բացի այդ, երբ սովորողները ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, նրանք ավելի շատ են ոգևորվում, բարձրանում են ինքնագնահատականը և սովորելու ցանկությունը:

Մոտիվացիայի զարգացման գաղափարը լեզվի ուսուցման ընթացքում շատ կարևոր է՝ ցանկացած առաջադրանք կամ հանձնարարություն կատարելիս դրական արդյունքների հասնելու համար: Մոտիվացիան դիտվում է որպես մտավոր ազդակ, որը ուղղորդում է մարդու վարքը և մեծացնում է սովորելու ցանկությունը:

Մոտիվացիան, հատկապես օտար լեզուների ուսուցման համատեքստում շատ կարևոր է: Հետևաբար անհրաժեշտ է առաջին հերթին մոտիվացնել աշակերտներին, որպեսզի վերջիններս հաճույքով սովորեն օտար լեզուն: Ինչպես նաև շատ կարևոր է, որ դառնան այն լեզվի մշակույթի կրողը, որը ուսումնասիրվում է նրանց կողմից: Արդյունքում՝ նրանք ցանկանում են սովորել լեզուն և շփվել տվյալ լեզվով խոսող մարդկանց հետ:

Մասնակցելով համագործակցային նախագծերի՝ աշակերտների մոտ զարգանում են նաև սոցիալական, համագործակցային, թիմային, գրավոր և բանավոր հաղորդակցական հմտությունները: Թիմային աշխատանքներն էլ իրենց հերթին նպաստում են որոշակի դերերի ստանձմանը, իրականացմանը, աշխատանքային հարաբերությունների զարգացմանը: Իմ իրականացրած նախագծի ընթացքում աշակերտները ոգևորված աշխատում էին, քանի որ ուսուցմանը զուգահեռ գրում էին նամակներ Ռումինիայի դպրոցի աշակերտներին, նրանցից ստանում էին նամակներ, կարդում և վերարտադրում էին նամակների բովանդակությունը: Կապ հաստատելով

ֆրանսախոս աշակերտների հետ և էլեկտրոնային նամակներ փոխանակելով՝ աշակերտների մոտ զարգացան գրավոր հաղորդակցման հմտությունները.

1/ինչպես գրել ընկերական նամակ,

2/ինչպես սկսել և ավարտել նամակը:

Թիմային նամակ գրելու պրոցեսը նպաստեց մոտիվացնել այն աշակերտներին, ովքեր թույլ էին ուղղագրությունից: Բոլորը աշխատեցին միասին, և բոլոր նամակները տեղադրեցին թվային համագործակցային պատին՝ անկախ իրենց թույլ և ուժեղ կողմերից:

Բանավոր հաղորդակցման ընթացքում սկսեցին կիրառել արդեն սովորած բառապաշարը՝ խոսելով իրենց ժամանցի, դասարանի, դպրոցի, ընտանիքի, քաղաքի, երկրի, սիրած կերակրատեսակի մասին:

Առցանց հանդիպումների ժամանակ աշակերտներն աստիճանաբար դարձան անկաշկանդ ֆրանսերենով հաղորդակցվելիս: Ավելի արագ էին կողմնորոշվում, շատ արագ ձևակերպում էին տարբեր հարցեր:

eTwinning-ը նպաստեց միջազգային համագործակցությանը, որը կարևոր նախապայման է լեզուն կիրառելու համար: Աշակերտները համագործակցեցին ֆրանսախոս աշակերտների հետ՝ զարգացնելով լեզվական փոխգործակցությունը: Ընդլայնվեցին աշակերտների մշակութային պատկերացումները, քանի որ eTwinning նախագծերը նպաստում են մշակույթների բացահայտմանը և ըմբռնմանը՝ տարբեր երկրների դպրոցների հետ համագործակցելով: Կատարելագործվեցին նաև աշակերտների սոցիալական և հաղորդակցման հմտությունները, ինչը նպաստեց նրանց անհատական զարգացմանը:

Սովորողներն օգտագործեցին ֆրանսերենը իրական կյանքում տարբեր հաղորդակցական իրավիճակներում, ինչը բարելավեց նրանց լեզվական հմտությունները:

Առցանց նախագիծը կենտրոնացած էր կոնկրետ նպատակների վրա, ինչը դրդեց սովորողներին զարգացնել լեզվական հմտություններն այդ նպատակներին

հասնելու համար: Նախագիծը նպաստեց սովորողների ստեղծագործական գործունեությանը, քանի որ նրանք ստեղծեցին տեսանյութեր, շնորհանդեսներ և այլ թվային ռեսուրսներ՝ իրենց միջազգային գործընկերների հետ կիսվելու համար:

Թվային գործիքներ, որոնք կիրառվել են նախագիծն իրականացնելիս

Նախագծի ընթացքում կիրառվել են մի շարք թվային գործիքներ, բայց կփորձեմ ներկայացնել դրանցից մի քանիսը:

Ունկնդրելու և հասկանալու հմտությունները զարգացնելու համար հրաշալի թվային գործիք է Vocaroo-ն: Գործիքի առավելությունն այն է, որ կիրառման տեսանկյունից շատ պարզ և մատչելի է օգտագործողի համար: Գործիքը հասանելի է դառնում ուղղակիորեն մուտք գործելով կայք: Vocaroo-ում ստեղծված աուդիո ֆայլերը կարող են տարածվել որպես հղում բլոգներում և կայքերում: Ձայնագրությունները կարելի է ներբեռնել տարբեր ձևաչափերով: Շատ արդյունավետ գործիք է, քանի որ այն դասագրքերը, որոնք գործարկվում են հանրակրթական դպրոցներում, չունեն լսողական սկավառակներ, իսկ ֆրանսերենի դասավանդումը առանց լսողական վարժությունների աղյունավետ չէ: Կայքն անվճար է և հնարավոր է մուտք գործել աշխարհի ցանկացած վայրից առցանց բրաուզերի միջոցով: Հրաշալի գործիք է ուսուցիչների համար, ովքեր ունեն տեսողության խնդիրներ ունեցող աշակերտներ: Սովորողները կարող են օգտվել առցանց գործիքից՝ ձայնագրելու աուդիո ներկայացումը՝ անձամբ ներկայացնելու փոխարեն: Նրանք կարող են մի քանի անգամ ներբեռնել և լսել Vocaroo աուդիո ֆայլերը ուսուցչից կամ դասընկերներից՝ տեքստի կամ նյութի ընկալումը խորացնելու համար: Սովորողները կարող են ձայնագրել և լսել իրենց՝ զարգացնելով արտասանությունը: Այսպիսով՝ փոդքասթինգը, կերպարների հարցազրույցը և քննարկումները դառնում են հասանելի յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի համար Vocaroo-ի միջոցով :

Նախագծի ընթացքում մենք կիրառեցինք նաև Padlet համագործակցային պատը, որտեղ աշակերտները տեղադրում էին իրենց գրառումները, նամակները: Համագործակցային այս հարթակում հնարավոր է տեղադրել գրառումներ, տեսանյութեր, պատկերներ, աուդիո ֆայլեր:

Շատ արդյունավետ է կիրառել նաև Screencast-O-Matic-ը՝ էկրանի ձայնագրիչ հավելվածը: Գործիքը հնարավորություն է տալիս, համակարգչի էկրանը տեսաձայնագրելով, պատրաստել ուսումնական նյութը:

Mind Map («Մտքերի քարտեզ») առցանց գործիքը օգտագործվում է ուսումնական նյութը գծապատկերների միջոցով ներկայացնելու համար: Հատկապես դասի պլանը գծապատկերով ներկայացնելու արդյունքում հնարավոր կլինի մեկ հղմամբ ներկայացնել դասի պլանը՝ դասին անհրաժեշտ դիդակտիկ նյութերով (նկարներ, քարտեզներ, թեստեր, տեսասահիկներ), հղումներով և էլեկտրոնային պաշարներով: Գործիքը հնարավորություն է տալիս.

• դասի բոլոր կառուցվածքային տարրերը ներկայացնել առանձին-առանձին՝ կցելով դրանց անհրաժեշտ նկարագիր և տարբեր ֆայլեր (docx., ppt, pdf, jpeg և այլ), հղումներ,

• պատրաստի Mind Map-ը հնարավոր է արտահանել docx., ppt, pdf, jpeg և այլ ձևաչափերով,

• հրապարակել հղմամբ և խմբագրել (անգամ այլ օգտատերերի, որոնք հեղինակ չեն,

սակայն ունեն համապատասխան թույլտվություն),

• ստեղծված Mind Map-ը հնարավոր է պահպանել ամպային տեխնոլոգիաների միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով, վստահորեն կարելի է ասել, որ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցիչը խնայում է իր անձնական ժամանակը, տեսնում է իր աշխատանքի արդյունքը: Ստանում է այն զգացողությունը, որ իր ժամանակը ծախսվել է արդյունավետ և նպատակային: Ստանում է բավարարվածության զգացում իր աշխատանքից՝ տեսնելով աշակերտների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին: Անընդհատ զարգանում ու կատարելագործվում է որպես մասնագետ, կիրառում է ժամանակակից մեթոդներ՝ իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, նոր հմտություններ ձեռք բերելու և միշտ ձեռքը ժամանակի զարկերակին պահելու համար: Դասապրոցեսում ՏՀՏ-ները կարելի է լավագույնս համադրել դասավանդման այս կամ այն մեթոդի հետ և ստանալ փայլուն արդյունք: Թվային գործիքները և ռեսուրսները նպաստում են սովորելու նկատմամբ հետաքրքրության մեծացմանը, դրա արդյունավետությանը, աշակերտի համակողմանի զարգացմանը:

Այսպիսով, ինչպե՞ս և ինչու՞ օգտագործել ՏՀՏ-ն ֆրանսերենի դասաժամերին.

1.ուսուցիչները կարող են օգտագործել թվային ռեսուրսներ, ինչպիսիք են տեսանյութերը, աուդիո ձայնագրությունները, հավելվածները և ինտերակտիվ կայքերը՝ ուսուցումն ավելի գրավիչ և աշխույժ դարձնելու համար,

2.ապահովվում է մատչելիություն. թվային ռեսուրսները հասանելի են դառնում սովորողներին ցանկացած վայրից՝ նպաստելով ճկուն ուսուցմանը՝ իրենց կարիքներին և ժամանակացույցին համապատասխան,

3. թվային գործիքները հնարավորություն են տալիս անհատականացնել ուսուցումը, որտեղ ուսուցիչները կարող են հարմարեցնել բովանդակությունը և գործողությունները յուրաքանչյուր սովորողի մակարդակին և կարիքներին,

4. ապահովվում է փոխգործակցությունը. թվային հարթակները սովորողներին հնարավորություն են տալիս ֆրանսերենով հաղորդակցվել առցանց քննարկումների, ֆորումների

5. ուսուցիչները կարող են հետևել յուրաքանչյուր աշակերտի առաջընթացին և ավելի արդյունավետորեն գնահատել նրանց լեզվական հմտությունները,

6. առցանց հավելվածները և խաղերը խթանում են սովորողների մոտիվացիան

7. թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս հաղորդակից լինել ֆրանսերենի լեզվական, մշակութային և կրթական միտումներին՝ օգտվելով ժամանակի նորություններից և ընթացիկ բովանդակությունից:

8. թվային գործիքները հեշտացնում են սովորողների միջև համագործակցությունը, ինչը կարող է ամրապնդել նրանց ըմբռնումն ու արտահայտվելը ֆրանսերենով:

9.ժամանակի և ռեսուրսների խնայողություն. թվային տեխնոլոգիաների օգտագործումը կարող է նվազեցնել կրթական նյութերի տպագրության հետ կապված ծախսերը և խնայել ժամանակ դասերի պատրաստման համար:

10. սովորողները կարող են ավելի մանրամասնորեն ծանոթանալ Ֆրանկոֆոն մշակույթին, ինչը կհարստացնի նրանց պատկերացումները ֆրանսերենի մշակութային բազմազանության մասին:

Ամփոփելով ասենք, որ թվային տեխնոլոգիաների ինտեգրումը ֆրանսերենի ուսուցման մեջ առաջարկում է ավելի հարուստ, ճկուն ուսուցման հնարավորություններ՝ հարմարեցված սովորողների կարիքներին՝ միաժամանակ խթանելով փոխգործակցությունը, մոտիվացիան և ֆրանկոֆոն մշակույթի ըմբռնումը:

Հավելված

Remue-méninges (cartes mentales)

https://dotstorming.com/

https://www.ck12.org/student/

https://www.notebookcast.com/en

https://www.mindomo.com/

Murs virtuelles collaboratives:

https://ladigitale.dev/blog/digipad-des-murs-multimedias-pour-vos-activites-collaboratives

https://digipad.app/

https://padlet.com

http://linoit.com/

Présentations, dépliants, affiches etc.

https://www.canva.com/

Outils de sondage, d'une enquete

https://answergarden.ch

https://www.polleverywhere.com

https://www.wooclap.com

Outils pour s'enregistrer - hors What's App/mur Padlet

https://vocaroo.com

https://online-voice-recorder.com/fr

https://info.flipgrid.com

Reconnaissance vocale : https://www.textfromtospeech.com/fr/voice-to-text

Cartes lexicales numériques : https://quizlet.com/

Outil pour créer des récits/contes numériques https://www.storyjumper.com

Editeur du texte collaboratif : Framapad - Éditeur de texte collaboratif

BD : https://www.powtoon.com/

Realiser un depliant touristique

http://rdvdufle.canalblog.com/

https://wordwall.net/fr/resource/13502546/po

Օգտագործված գրականության ցանկ

1. "Didactique du français langue étrangère et technologies de l'information et de la communication", Sylvie Barma et Françoise Demaizière

2. "eTwinning : Apprendre avec et par les TICE", Jean-Pierre Verhaeghe

3. "Le numérique en classe de FLE", Stéphane Chabbal

4. "Guide pédagogique : eTwinning pour les enseignants de langues"* , eTwinning Europe. Ce

5"L'enseignement des langues étrangères à l'ère du numérique", Didier Delorme et David Tual